

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱՐԵԿ ԱՐՄԵՆԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

**ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎԻՍՏԱԿԱՆ ՉԱՓՈՒՄՆԵՐԻ
ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ (ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ, 2008-2020 ԹԹ.)**

ԻԳ.00.02. - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»
մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2022

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

НАРЕК АРМЕНОВИЧ СУКИАСЯН

**ЭВОЛЮЦИЯ СТРУКТУРНЫХ И КОНСТРУКТИВИСТСКИХ ИЗМЕРЕНИЙ
ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ РА (НА ПРИМЕРЕ АРМЯНО-РОССИЙСКИХ
ОТНОШЕНИЙ, 2008-2020 ГГ.)**


Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по
специальности 23.00.02 – “Политические институты и процессы, международные
отношения”

АВТОРЕФЕРАТ

Ереван-2022


Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ա. Մարգարով
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ Խ. Ա. Գալստյան պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռ. Գ. Կարապետյան
Առաջատար կազմակերպություն՝	Հայ-ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2022 թ. ապրիլի 7-ին, ժամը 12:00-ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդի նիստում:
Մասնագիտական խորհրդի հասցեն է՝ ՀՀ, Երևան-0025, Ալեք Մանուկյան 1:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2022 թ. փետրվարի 23-ին:
056 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոց.  Վ. Ա. Պետրոսյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете.

Научный руководитель:	доктор политических наук, профессор А. А. Маркаров
Официальные оппоненты:	доктор политических наук, доцент Х. С. Галстян кандидат исторических наук. доцент Р.Г. Карапетян
Ведущая организация:	Российско-Армянский университет

Защита состоится 7 апреля 2022г. в 12:00 часов на заседании действующего в ЕГУ РА специализированного совета 056 "Политология и международные отношения" ВАК РА. Адрес: РА, Ереван 0025, ул. А. Манукяна 1.
С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.
Автореферат разослан 23 февраля.
Научный секретарь специализированного совета,
кандидат исторических наук, доцент  В. С. Петросян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հայ-ռուսական հարաբերությունները Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության անկյունաքարային ուղղություններից են: Դրա մասին վկայում են առանցքային ոլորտներում երկկողմ փոխգործակցության մակարդակները, իրավապայմանագրային հիմքերի ծավալները, ընդհանուր շահերն ու նպատակները, որոնց ամբողջությունն ամփոփվում է դրանց՝ ռազմավարական դաշնակցության մակարդակի ամրագրմամբ: Այդուհանդերձ, առկա քաղաքագիտական հետաքրքրությունն ու թեմայի մշակվածությունը, ըստ մեզ, մասամբ են արտացոլում արտաքին քաղաքականության այդ ուղղությանն առնչվող հիմնահարցերի աճող կարևորությունը, ինչը թեմայի արդիականությունը հավաստող առաջին հանգամանքն է: Երկրորդ, ուսումնասիրելով ոչ թե (ոչ միայն) քաղաքականության հետևանքները, այլ առաջին հերթին դրանք պայմանավորող չափումները, դրանցում առկա գործոններն ու վերջիններիս էվոլյուցիան, թեմայի ուսումնասիրությունն անցում է կատարում նկարագրողականից բացատրող գիտական գիտելիքին, ինչը որոշում կայացնողների ու հետազոտողների համար ինտրավորություն է ստեղծում «միջամտել» քաղաքական գործընթացի տարբեր խնդրային փուլերում՝ դրանք ուսումնասիրելու կամ բարելավելու նպատակով:

Ավելին, թերևս պայմանավորված այն հանգամանքով, որ թեման ՀՀ արտաքին քաղաքականության ուսումնասիրության մեջ ունի հիմնարար նշանակություն՝ լիովին են դրա մասին ընդհանրական կամ դեպքային-իրադարձային բնույթի վերլուծությունները, սակայն ըստ մեզ, պակաս զարգացած է տվյալ ուղղության նեղ մասնագիտացումը, ի տարբերություն տարածաշրջանային որոշ այլ ուղղությունների: Երրորդ, թեև հայ-ռուսական հարաբերությունները բնութագրվում են որպես ռազմավարական դաշնակցություն, ինչը առաջին հայացքից ստատիկության տպավորություն է թողնում, գործնականում՝ դրանց բնորոշ է հարուստ դինամիկան, որը հատկապես ընդգծված դրսևորում է ստացել մեր կողմից ընտրված ժամանակահատվածում: Այդ ակտիվությունը պայմանավորված է անվտանգային միջավայրի ցնցումներով՝ 2008 թ. ռուս-վրացական պատերազմով, 2016 թ. Ապրիլյան պատերազմով և դրանից բխող գործընթացներով՝ մինչև, բայց ոչ ներառյալ 2020 թ. Արցախյան երկրորդ պատերազմը: Բացի վերոնշյալ անվտանգային ցնցումներից, ժամանակաշրջանը լի է եղել նաև դրանց հետ թույլ կամ անուղղակիորեն փոխկապակցված կարևոր զարգացումներով (անդամակացություն Մաքսային միությանն ու Եվրասիական տնտեսական միությանը, Եվրամիության հետ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կնքում, Թավշյա հեղափոխություն և այլն), որոնց բազմաշերտությունը կարիք է ստեղծում ամբողջական մոտեցմամբ համատեքստայնացման, թեմայի շրջանակներում մասնավորից ընդհանուր վերլուծության: Հաջորդիվ, թեմայի հետազոտությունը, *inter alia*, եթե ոչ առաջին

հերթին արդի անհրաժեշտություն է այդ ուղղությամբ հետազոտահեն քաղաքականության մշակման համար: Թեմայի արդիականությունը ընդգծվում է նաև քաղաքական գործընթացների իրականության մեջ, ինչը թե՛ հետազոտության նախաշեմին, թե՛ դրա ընթացքում շարունակաբար ընդգծել է հայ-ռուսական ուղղությամբ ՀՀ արտաքին քաղաքականության ձևակերպման բացթողումները, դրանց առնչվող թեր- և թյուրըմբռումները, համակարգային մոտեցման բացակայության հետևանքները, որոնք առանցքային նշանակություն են ձեռք բերում հայ-ռուսական փոխգործակցության մեջ գոյություն ունեցող և աճող քաղաքական, տնտեսական, անվտանգային, ինտեգրացիոն, հումանիտար և այլ դերակատարությունների համատեքստում:

Վերջապես, թեմայի արդիականությանն է նպաստում նաև տեսամեթոդական նորարար մոտեցումը, որը, համադրելով նեոռեալիզմի և կոնստրուկտիվիզմի հիմնադրոյթները, վերլուծական ու կանխատեսման գործիքները, հնարավորություն է տալիս մշակել ավելի համապարփակ գիտելիք և քաղաքականություն:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության **նպատակն է** վեր հանել ՀՀ արտաքին քաղաքականության կառուցվածքային ու կոնստրուկտիվիստական չափումների էվոլյուցիան 2008-2020 թթ. հայ-ռուսական հարաբերությունների օրինակով: Նպատակը ենթադրում է ՀՀ արտաքին քաղաքականությունը ձևավորող հիմնական չափումների՝ դրանց մաս կազմող գործոնների համակարգի ուրվագծում և նախանշված շրջափուլում դրանց վերափոխման գործընթացների մշտադիտարկում:

Այդ նպատակով՝ սահմանվել են հետազոտական հետևյալ **խնդիրները՝**

խնդիր 1. *վեր հանել* նեոռեալիզմի և կոնստրուկտիվիզմի հայեցակարգերի վերաբերելիությունը, համադրելիությունը և կիրառելիությունը ՀՀ արտաքին քաղաքականության չափումների ուսումնասիրության հարցում: Խնդրի շրջանակներում ցույց է տրվել, թե հետազոտական ինչ հնարավորություններ է տրամադրում նեոռեալիզմի և կոնստրուկտիվիզմի հայեցակարգերի *սինթեզված* կիրարկումը ՀՀ արտաքին քաղաքականությունը ձևավորող հիմնական չափումների ուսումնասիրության հարցում, ինչ բացթողումներ են առաջ գալիս դրանց մեկուսի կիրառման պարագայում, ինչպիսի տեսամեթոդական մոտեցում է հարկավոր քաղաքական գործընթացների ուսումնասիրությունների մեջ դրանց համատեղման դեպքում, և ինչպես են դրանց կողմից առաջարկվող հայեցակարգերը բացատրողական և վերլուծական գործիքներ տրամադրում հետազոտության նպատակին հասնելու համար:

խնդիր 2. *վեր հանել* ՀՀ արտաքին քաղաքականության վրա ազդող կառուցվածքային¹ չափման հիմնական գործոնները և դրանց էվոլյուցիան՝ մասնավորապես նրանք, որոնք վերաբերելի են հայ-ռուսական

¹ Նույն ինքը նեոռեալիզմ. երկու տերմինները գիտական գրականության (Dunne & Brian, 2014, էջեր 102-106) և սույն առենախոսության մեջ օգտագործվում են փոխարինաբար:

հարաբերությունների համատեքստում՝ 2008 թ. ռուս-վրացական պատերազմի նախօրեի դրությամբ և պատերազմի արդյունքում ու *սահմանել* դրանց խթանող կամ սահմանափակող ազդեցությունը: Խնդրի շրջանակներում բացահայտվել են ներքին-կառուցվածքային, տարածաշրջանային-ենթահամակարգային և գլոբալ-համակարգային այն միջավայրի պայմանները, գործոնները, որոնցում ձևավորվել է ՀՀ արտաքին և դաշինքային քաղաքականությունը՝ օգտվելով սպառնալիքների բալանսավորման և ենթադաշնակցման հայեցակարգերից, ինչպես նաև որոշակիացվել են այդ գործոնները՝ ըստ դրանց խթանող կամ սահմանափակող չափանիշի:

Խնդիր 3. *վեր հանել* ՀՀ արտաքին քաղաքականության վրա ազդող կառուցվածքային (նեոռեալիստական) չափման հիմնական գործոնները և դրանց էվոլյուցիան՝ մասնավորապես նրանք, որոնք վերաբերելի են հայ-ռուսական հարաբերությունների համատեքստում՝ 2016 թ. Ապրիլյան պատերազմի դրությամբ և պատերազմի արդյունքում (մինչև, բայց ոչ ներառյալ 2020 թ. Արցախյան երկրորդ պատերազմը) ու *սահմանել* դրանց խթանող կամ սահմանափակող ազդեցությունը: Խստորեն պահպանելով որդեգրված մեթոդաբանությունը և ելնելով վեր հանված կառուցվածքային չափումն ու դրանում առկա գործոնների վերափոխման գործընթացը համակարգային մշտադիտարկելու անհրաժեշտությունից՝ խնդրի ուսումնասիրության մեջ կիրառվել են այն մոտեցումներն ու հարցադրումները, որոնք օգտագործվել են *խնդիր 2*-ի դեպքում:

Խնդիր 4. *վեր հանել* ՀՀ արտաքին քաղաքականության վրա ազդող կոնստրուկտիվիստական չափման հիմնական գործոնները և դրանց էվոլյուցիան՝ մասնավորապես նրանք, որոնք վերաբերելի են հայ-ռուսական հարաբերությունների համատեքստում՝ 2008 թ. ռուս-վրացական պատերազմի նախօրեի դրությամբ և պատերազմի արդյունքում: Խնդրի շրջանակներում բացահայտվում և ներկայացվում են ՀՀ գործադիր իշխանության ինստիտուտի՝ այն գլխավորող կառավարող էլիտաների ինքնության, (աշխարհ)ընկալումների, ակնկալիքների, դավանած նորմերի ձևավորումը, վերափոխման գործընթացները և ազդեցությունը արտաքին և դաշինքային քաղաքականության վրա: Առանձնացվում և քննվում են սեփական կարողությունների, տարածաշրջանային-ենթահամակարգային ու գլոբալ-համակարգային պայմանների, առկա սպառնալիքների ու դրանց բալանսավորման եղանակների և գլխավորապես Ռուսաստանի Դաշնության դերի մասին կառավարող էլիտաների ընկալումներն ու դրանց դրսևորումները արտաքին քաղաքականության մեջ:

Խնդիր 5. *վեր հանել* ՀՀ արտաքին քաղաքականության վրա ազդող կոնստրուկտիվիստական չափման հիմնական գործոնները և դրանց էվոլյուցիան՝ մասնավորապես նրանք, որոնք վերաբերելի են հայ-ռուսական հարաբերությունների համատեքստում՝ 2016 թ. Ապրիլյան պատերազմի նախօրեի դրությամբ և պատերազմի արդյունքում (մինչև, բայց ոչ ներառյալ 2020 թ.

Արցախյան երկրորդ պատերազմը) և *գնահատել* դրանց ազդեցությունը: Ինչպես և խնդիր 2-ի և 3-ի մեթոդական հետևողականության պարագայում՝ այստեղ նույնպես խնդրի լուծումը իրականացվել է խնդիր 4-ի մոտեցումների շարունակական կիրառմամբ՝ ապահովելու համար դրանց արդյունքների գիտական վավերականությունն ու ստուգելիությունը:

Հիմնախնդրի գիտական մշակվածությունը: Սահմանված թեման գտնվել է հետազոտողների ուշադրության կենտրոնում թերևս հենց թեմայի ծագումից՝ ՀՀ անկախությունից սկսած: Դրա գիտական մշակվածությանը համակարգված անդրադառնալու համար ներկայացնենք այն՝ ըստ վերոնշյալ հետազոտական խնդիրների: Այսպես, Նեոռալիզմի և կոնստրուկտիվիզմի սինթեզը քաղաքագիտական հանրայթում համարվում է բավական առաջադեմ մոտեցում, սակայն միևնույն ժամանակ խրախուսվում է անգամ այդ երկու մոտեցումների ակունքներում գտնվող մտածողների կողմից (Walt, 1987, էջեր 181-217; Wendt, 1999, 13-14; Mearsheimer, 2013): Նեոռեալիզմն, իր հերթին, առաջ է եկել նախորդ դարի երկրորդ կեսին որպես մարտահրավեր դասական ռեալիզմին՝ պետությունների միջև ուժային գործընթացի պատճառները փնտրելով համակարգային անարխիայի մեջ, ոչ թե՛ մարդկային էության (Kaplan, 1957; Hoffmann S. , 1965; Dunne & Brian, 2014): Համակարգերի մասին հետազոտությունները զարգացել են հիմնական երկու ուղղությամբ՝ ստեղծելով հարձակողական (Mearsheimer, 2001) ու պաշտպանողական նեոռեալիզմի (Christensen & Snyder, 1990; Jervis, 1978; Van Evera, 1999; Waltz, 1979; Taliaferro, 2000-2001; Stein, 2013) դպրոցները: Այս աշխատությունում կիրառվում են հիմնականում հենց պաշտպանողական նեոռեալիզմի դրույթները, որի հիմնավորումը մանրամասն ներկայացված է աշխատանքի առաջին գլխում, իսկ ատենախոսության մեջ «նեոռեալիզմ» կամ «կառուցվածքային ռեալիզմ» եզրույթները վերաբերում են հենց այդ դպրոցին: Պաշտպանողական նեոռեալիստների հետազոտությունների առանցքը կազմել է առաջին հերթին պետությունների գոյապահպանումը, ապա դաշինքային քաղաքականությունը, դրա շարժառիթները, արտաքին սպառնալիքներին արձագանքելու ռազմավարությունները, համակարգում առկա պետությունների շարքում դաշնակից ընտրելու տրամաբանությունը (Waltz, 1979, p. 128; Schweller R. L., 1994; Lobell, 2017 ; Walt, 1987): Դրանցից կենտրոնական նշանակություն է ստացել ենթադաշնակցման (bandwagoning) հայեցակարգը, որը ենթադրում է սպառնալիքների հավասարակշռում անհամաչափ դաշինքի միջոցով (Labs, 1992, pp. 392-394; Handel, 1981; Schweller, 1994; Walt S. M., 1987; Walt S. , 1991): ՀՀ արտաքին քաղաքականության ու դրա ռուսական ուղղության համատեքստում նեոռեալիզմը միջոցներ է տալիս բացատրելու անվտանգային միջավայրի պայմանները, սպառնալիքներն ու դրանց բալանսավորման մեխանիզմները, որոնց առանցքում է դաշինքային քաղաքականությունը:

Կոնստրուկտիվիզմն, իր հերթին, արդյունք է 1980-ական թթ. ընթացող ռացիոնալիստների և քննադատական տեսաբանների մրցակցության (Jung, 2019),

ոչ պատահականորեն առաջ եկած որպես նեոռեալիզմի ու նեոլիբերալիզմի հետազոտական թերություններն ու բացերը լրացնող մեթոդաբանություն (Price & Reus-Smit, 1998): Այդ թերություններն էլ հենց պայմանավորում էին կոնստրուկտիվիստների հիմնական հետաքրքրությունը՝ սոցիալական իրականությունն ու գործընթացները (Wendt, 1999; Checkel, 1998; Fearon & Wendt, 2002; Adler, 1997)՝ ի տարբերություն կամ ի լրացում ֆիզիկական իրականության ու գործընթացների, որոնք մինչ այդ տարածված հայեցակարգերի՝ այդ թվում նեոռեալիզմի հետազոտական առարկաներն էին: Այսպիսով, համակարգային անարխիստի մեջ պետությունների վարքը բացատրելու համար սկսում են ուսումնասիրվել նորմերը, սոցիալականացումը, ինքնությունները, ընկալումները, քանի որ «անարխիստն այն է, ինչ պետություններն են ստեղծում դրանից» (Wendt, 1999; Finnemore & Sikkink, 2001; Katzenstein, 1996; Theys, 2017; Onuf, 1989; Jepperson, Wendt, & Katzenstein, 1996; Weldes, 1996): Այս հետազոտության օբյեկտի համառոտացում կոնստրուկտիվիզմը կարևորում է արտաքին քաղաքականությամբ զբաղվող ընդհանուր առմամբ կառավարող էլիտայի ու մասնավորապես գլխավոր գործադիր ինստիտուտներին պատկանող արտաքին քաղաքական ընկալումները, ինքնությունը, պատկերացումները և դրանց նշանակությունը քաղաքականության մշակման գործընթացում:

Երկու հայեցակարգերի սինթեզային կիրառման անհրաժեշտության գիտակցումը աստիճանաբար աճել է դարասկզբից, երբ դրանց առանձին օգտագործման խնդիրներին և մեկտեղման առավելություններին են սկսել անդրադառնալ պետությունների դաշինքային քաղաքականության վրա ազդող գործոնները ուսումնասիրող առաջատար հետազոտողները (Barkin, 2003; Rogers, 2013; Sterling-Folker, 1997; Mouritzen, 2017; Wæver, 2002; Salem, 2010):

Ինչ վերաբերում է հետազոտության կիրառական Հայաստանի արտաքին քաղաքականության, մասնավորապես հայ-ռուսական հարաբերությունների հիմնահարցի գիտական մշակվածությանը, ապա այստեղ կա հետազոտությունների ծավալուն պաշար, որտեղ սակայն, բնականորեն գերակա է հարցերի ենթաթեմատիկ կենտրոնացվածությունը: Դրանք կարելի է պայմանականորեն բաժանել հետևյալ խմբերի.

- աշխատություններ, որոնք վերաբերում են հարաբերությունների անվտանգային բաղադրիչին, ռազմատեխնիկական համագործակցությանը (Քոչարյան & Աղաբաբյան, 2018; Aglyan, 2016; Гегамян, Мелконян, & Нерсисян, 2019; Giragosian & Minasyan, 2011; Минасян, 2009; 2013; 2015; Курьелев, Галоян, Станис, & Бредихин, 2018),

- աշխատություններ, որոնք դիտարկում են հարաբերությունները տարածաշրջանային քաղաքականության, ուժերի հավասարակշռման տեսանկյունից (Քոթանջյան, 2008; Lukyanov, Balta, & Has, 2020; Baev, 2021; Атоян, 2015; Winrow, 2009; Mikhelidze, 2009; Մարտիրոսյան, 2008; Ozdal, Zvyagelskaya, & Svistunova, 2021; Secieru, Saari, & Bechev, 2021),

- աշխատություններ, որոնք ուսումնասիրում են Հայաստանի դաշինքային քաղաքականությունը Արցախյան հակամարտության համատեքստում (Թորոսյան, 2009; Маркедонов, 2013; Sanamyan, 2015; Ter-Matevosyan, 2017; Zolyan, 2016; Broers, 2019; Poghosyan, 2020),

- աշխատություններ, որոնց դիտակետը հետսառըպատերազմյան աշխարհակարգում հետխորհրդային տարածքն է՝ իրեն բնորոշ առանձնահատկություններով (Тренин, 2006; Лукьянов, 2018; Forsberg & Herd, 2015; Bechev, 2015; Baev, 2017; Aberg & Terzyan, 2018; Charap, Demus, & Shapiro, 2018; Шарков, 2008),

- աշխատություններ, որոնց հետազոտական օբյեկտը արտաքին քաղաքականության հավասարակշռումն է՝ հայտնի որպես «կոմպլեմենտարիզմ» կամ «բազմավեկտոր» քաղաքականություն և դրա արտահայտումը մրցակցող ինտեգրացիոն գործընթացներում (Быстрицкий, Лукьянов, Кортуннов, Бордачёв, & Барабанов, 2016; Тренин, 2021; Kortunov, 2020; Shirinyan A, 2016; Duke & Gebhard, 2017; Delcour, 2014; Markedonov, 2017),

- հայ-ռուսական հարաբերությունների՝ ԵԱՏՄ-ի և ՀԱՊԿ-ի անդամակցության և դրանց շրջանակներում բազմակողմ ինստիտուցիոնալ դինամիկան ու խընդիրները ուսումնասիրող աշխատություններ (Галстян, 2014; Королёв & Калачигин, 2020; Ter-Matevosyan, Drnoian, & Yeremyan, 2017; Chikanayev, 2020; Խուլեյան, 2019; Тавадян & Сафарян, 2020),

- հետազոտություններ, որոնք կենտրոնանում են արտաքին քաղաքականության մեջ դերակատարում ունեցող նորմերի, ինքնության, պատմական ընկալումների, էլիտաների «անձնական» կոնկրետ դերակատարների կողմից պայմանավորվող գործոնների վրա (Գալստյան, Աբրահամյան, & Դավթյան, 2021; Mirzoyan, 2010; Astourian, 2000; Hovannisian, 1994; Suny, 1993; Gamaghelyan & Romyantsev, 2021; Kotchikian, 2006):

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ արտաքին քաղաքականության՝ մասնավորապես հայ-ռուսական հարաբերությունների էվոլյուցիան է: Հետազոտության առարկա են հանդիսացել այդ հարաբերությունների կառուցվածքային և կոնստրուկտիվիստական չափումները, ինչի ներքո ենթադրվում են դրանք պայմանավորող գործոնները՝ կառուցվածքային պայմանների վերափոխման գործընթացները (ներքին կառուցվածքային, տարածաշրջանային-ենթահամակարգային, գլոբալ-համակարգային), արտաքին սպառնալիքները, դրանց վերափոխումները ու ի արձագանք այդ սպառնալիքների՝ դաշինքային քաղաքականության դինամիկան, արտաքին քաղաքականության պատասխանատու ինստիտուտի ներկայացուցիչ կառավարող էլիտաների նորմերի, ինքնության ու ընկալումների զարգացման գործընթացները:

Ատենախոսության տեսամեթոդական հիմքը: Ուսումնասիրության հիմնական, մասնագիտական տեսամեթոդական հիմքերը փոխառված են առարկայի ուսումնասիրության պրիզմաներից՝ նեոռեալիզմի և կոնստրուկտիվիզմի մոտեցումներից, որոնց տեսական մշակումներն ու էմպիրիկ կիրառությունները

ուղեցույց են հանդիսանում օրինակելի հետազոտության համար: Մեթոդական ապարատը լրացվել է *սպառնալիքների հավասարակշռման* (վեր հանելու ՀՀ արտաքին քաղաքականության վրա ազդող կառուցվածքային չափման հիմնական գործոնները), *ենթադաշնակցման* (բացատրելու ՀՀ դաշինքային քաղաքականության դինամիկան), *նորմերի կենսաշրջանի հայեցակարգերը* (վեր հանելու կոնստրուկտիվիստական չափման գործոնների դերակատարությունը): Կառավարող էլիտաների ընկալումներն ու ինքնությունը վեր հանելու համար օգտագործվել է *խոսույթային վերլուծության* (discourse analysis) մեթոդը: Այդ նպատակով հավաքագրվել, կողավորվել ու վերլուծվել են ՀՀ նախագահների, վարչապետների, արտաքին գործերի նախարարների, և իշխանության մաս կազմող որոշ առանցքային ներկայացուցիչների ավելի քան 550 ելույթներ, հարցազրույցներ, մամուլի ասուլիսներ, հրապարակախոսական տեքստեր, հայտարարություններ, ծրագրեր և այլն: ՀՀ արտաքին քաղաքականության վրա ազդող կառուցվածքային գործոնները պարզելու համար գործածվել է *կառուցվածքագործառնական մեթոդը*: Դրանց վերափոխման գործընթացները և արտաքին քաղաքականության մեջ դրանց դերակատարության էվոլյուցիան ուսումնասիրելու համար կիրառվել են *փուլայնացման*, *իրադարձային վերլուծության*, *վիճակագրական*, *համեմատական մեթոդները*: Կիրառվել են այլ ընդհանուր միջառարկայական մեթոդներ հետազոտության տեսական (*համադրություն*, *վերլուծություն*, *վերացարկում*) և էմպիրիկ (*դիֆուզիոն*, *չափում*, *նույնության օրենք* և *բավարար հիմունքի օրենք*) փուլերում:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսությունը տրամադրում է նեոռեալիզմի և կոնստրուկտիվիզմի սինթեզի ամենաընդգրկուն տեսական անդրադարձներից մեկը: Ամփոփելով թեմատիկ զբաղանջային հնարավորինս լայն շրջանակ, այն հիմնավորում է երկու հայեցակարգերի համադրման անհրաժեշտությունը նմանատիպ հետազոտությունների համար, հստակեցնում դրա կիրառման մեթոդաբանությունը, առանձնահատկությունները, սահմանափակումները, ինչը նման կերպով նորույթ է թե՛ հայրենական, թե՛ միջազգային գիտական աշխատանքներում:

Բխելով նախորդից՝ ատենախոսության հաջորդ առանցքային նորույթը վերոնշյալ սինթեզի կիրառմամբ ՀՀ արտաքին քաղաքականության, դաշինքային ուղղության ընտրության, դաշինքային քաղաքականության գործընթացի ու դինամիկայի, դրանք պայմանավորող կառուցվածքային ու կոնստրուկտիվիստական գործոնների բացահայտմանն ուղղված համապարփակ ու հնարավորինս ամբողջական գիտական գիտելիքի ստեղծումն է:

Ատենախոսությունը մշակում է ՀՀ արտաքին քաղաքականության ու մասնավորապես դրա ռուսական ուղղության հետազոտման համար նոր չափումային համակարգ՝ կազմված հայեցակարգերի վերոնշյալ համադրությունից: Կառուցվածքային չափման մեջ սահմանելով ու ուրվագծելով ներքին-կառուցվածքային, տարածաշրջանային-ենթահամակարգային, գլոբալ-համակարգային գործոնները, իսկ կոնստրուկտիվիստական չափման մեջ մեկտեղելով կառավարող էլիտայի

վարած արտաքին քաղաքականության վրա ազդող ինքնութենական, ընկալումային, նորմատիվ գործոնները, հետազոտական այս ապարատը թույլ է տալիս կուռ մեթոդաբանությամբ մշտադիտարկել ՀՀ արտաքին քաղաքականությունն ու դրա վրա ազդող գործոնների ողջ ընթացքը, վեր հանել 2008 թ. ռուս-վրացական ու 2016 թ. Ապրիլյան պատերազմների արդյունքում անվտանգային միջավայրի փոփոխության ազդեցությունը արտաքին քաղաքականության վրա: Ի լրումն դրա, նման մոտեցումը թույլ է տալիս, ա) օգտագործելով չափումների այս համակարգը, շարունակել օբյեկտի հետազոտությունը ժամանակագրական այլ ընդգրկումներում, բ) վերացարկել ու կիրառել այն այլ դեպքերի ուսումնասիրման համար:

Ատենախոսության ստեղծած քաղաքագիտական արժեքներից է ներքին կարողությունների ու արտաքին քաղաքականության կապի տեսական մշակվածության ամբողջականացումը կառուցվածքային ռեալիզմի ներքո՝ պետության համալիր մոբիլիզացիոն հզորության համատեքստում և տեսական այդ մոտեցման ինտեգրումը ՀՀ արտաքին քաղաքականության, սպառնալիքների բալանսավորման ու դաշինքային ընտրության հիմնահարցերի ուսումնասիրության մեջ:

Ատենախոսությունն արժեքավոր է նաև նրանով, որ այն լրացնում է հայ-ռուսական հարաբերությունների մասին քաղաքագիտական ընդգրկուն հետազոտությունների շարքը՝ առանձնահատուկ ժամանակային կենտրոնացման, դրանք պայմանավորող գործոնների ու դրանց հետազոտման համար անհրաժեշտ մեթոդաբանության առումով:

Նմանապես, հետազոտության նորույթն այն է, որ առաջին անգամ բացահայտվում ու ներկայացվում են ՀՀ կառավարող բոլոր էլիտաների (առավել մեծ կենտրոնացմամբ՝ 2008-2020 թթ. կառավարած) արտաքին քաղաքական ընկալումները, այն նորմերն ու ինքնության տարրերը, որոնք պայմանավորել են նրանց վարած արտաքին քաղաքականությունը ու վերաբերմունքը ՀՀ դաշինքային քաղաքականության ու դաշնակցի նկատմամբ: Գործադիր իշխանության ինստիտուտի արտաքին քաղաքականության հիմնական պատասխանատուների հնարավորինս ամբողջական, իսկ 2008-2020 թթ. ընթացքում՝ գրեթե բոլոր ելույթների, հարցազրույցների ու հանրային խոսքի այլ ձևերի հետազոտությունը ստեղծել է կառավարող էլիտաների արտաքին քաղաքական խոսույթի յուրատեսակ տվյալների ու դրանց վերլուծության շտեմարան: Այդ համատեքստում ատենախոսության գիտական նորույթների շարքին է դասվում ՀՀ արտաքին քաղաքականության վրա առանցքային նշանակություն ունեցող նորմերի ձևավորման կենսաշրջանների ուսումնասիրությունը՝ դրանց կայացումը, վերափոխման գործընթացները, դրանց շուրջ առկա բանավեճերը ու սահմանափակող կամ լեգիտիմացնող ազդեցությունը քաղաքական դերակատարների ու գործընթացների վրա: Ատենախոսությունը, հիմնվելով սպառնալիքի հավասարակշռման հայեցակարգի վրա, առաջին ամբողջական փորձն է հայ-ռուսական հարաբերությունների՝ Երևան-Մոսկվա-Բաքու, Երևան-Մոսկվա-Անկարա եռանկյունիների դինամիկայի միջոցով ուսումնասիրության, որի մեջ կարևորվում են ինչպես ՀՀ-ի

սպառնալիքի աղբյուրի հետ փոխկապակցված ներազդեցություններն ու գործընթացները, այդպես էլ՝ դրանց ու ռազմաքաղաքական դաշնակցի հետ հարաբերությունների դինամիկան, այնքանով, ինչքանով դրանք բխում են ատենախոսության նպատակ-խնդիրներից:

Աշխատությունը ձևակերպում է փոքր պետությունների ենթադաշնակցման քաղաքականության առանձնահատկությունները, դրանց արդյունքում առաջացող ասիմետրիկ հարաբերությունների կառավարումն ու դինամիկան, դրանց հավասարակշռմանը ուղղված բազմավեկտոր քաղաքականության իրականացման առանձնահատկություններն ու սահմանափակումները՝ ինչպես տեսականորեն, այնպես էլ գործնականում՝ ՀՀ օրինակով:

Ատենախոսության գիտատեսական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսության ընդհանուր նշանակությունը ՀՀ արտաքին քաղաքականության թերևս կարևորագույն ուղղության ու թեմայի առավել խորը ու գիտական հասկացվածության մակարդակի բարձրացման մեջ է, ինչն անկախ այլ հանգամանքներից, ինքնին ներքին (intrinsic) նշանակություն ունի: Հետազոտության գիտատեսական նշանակությունն արտաքին քաղաքականության մշակման գործընթացի ուսումնասիրման նոր մոդելի ստեղծումն է, ներկայացումը և կիրառումը, որը կարող է փոխառվել ինչպես ժամանակագրական, այնպես էլ աշխարհագրական այլ դեպքերի հետազոտման նպատակով: Այն կարող է լրացնել քաղաքագիտական ուսումնական գործընթացի տեսական բազան և, տրամադրելով դրա գործնական կիրառման օրինակը, յուրատեսակ հետազոտական ուղեցույց լինել քաղաքագիտության ուսանողների գործնական աշխատանքների համար:

Մեծ է նաև ատենախոսության կիրառական նշանակությունը ակադեմիական շրջանակից դուրս, քանի որ այն կարող է ծառայել որպես վարած քաղաքականության գիտական վերլուծության, դրա ուժեղ ու թույլ կողմերի, հնարավորությունների ու սպառնալիքների ինքնանդրադարձի միջոց ՀՀ արտաքին քաղաքականության մշակողների, հետազոտողների, վերլուծական շրջանակների, մեդիայի, ուղեղային կենտրոնների և որոշում կայացնողների համար, ու հղման կետ հանդիսանալ հայեցակարգերի մշակման ժամանակ:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Հետազոտության ընթացիկ արդյունքներն ու դրույթները քննարկվել են Երևանի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի «Ազգային անվտանգություն» և «Տարածաշրջանային քաղաքականություն» ուսումնական ծրագրերի շրջանակում կազմակերպված դասախոսություն-աշխատարանների ընթացքում, ինչպես նաև քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի նույն ֆակուլտետի քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի կողմից: Ատենախոսության հիմնադրույթները ներկայացվել են 6 գիտական հրապարակումներում, Քաղաքագիտության միջազգային ասոցացիայի (IPSA) Աշխարհաքաղաքականության

չորրորդ միջազգային աշխատարանում (Նոյեմբերի 2-3, 2021), Եվրոպական միության անվտանգային ուսումնասիրությունների ինստիտուտում (EUISS, Փարիզ) տպագրված գեկույցում, Միջազգային քաղաքականություն և հասարակություն (Internationale Politik und Gesellschaft, Բյուրսել) պարբերականում հրատարակված հոդվածներում, այլ մեդիա ֆորմատներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության մեջ օգտագործվել է 413 աղբյուր: Թեկնածուական ատենախոսության տեքստային ծավալը 185 էջ է:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի ներածությունը հիմնավորում է թեմայի արդիականությունը, սահմանում հետազոտության նպատակն ու խնդիրները, ցույց տալիս թեմայի գիտական մշակվածությունը, առանձնացնում ու նկարագրում հետազոտության օբյեկտը և առարկան, տեսամեթոդական հիմքը, գիտական նորույթը, գիտատեսական և կիրառական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլուխը վերնագրված է «**Ատենախոսության տեսամեթոդական հիմքերը**», և ներկայացնում է կիրառված երկու հայեցակարգային մոտեցումները՝ կառուցվածքային ռեալիզմն ու կոնստրուկտիվիզմը, որպես պետության արտաքին քաղաքականության մշակման վրա ազդող գործոնների վերհանման գիտագործնական միջոցներ, ինչպես նաև քննարկում է այդ երկու հայեցակարգերի համադրման առանձնահատկությունները: Աշխատանքի առաջին գլխում հասցեագրվել է հետազոտական 1-ին խնդիրը:

Գլխի առաջին՝ «**Կառուցվածքային ռեալիզմը որպես ՀՀ-ՌԴ դաշինքային հարաբերությունների ուսումնասիրման տեսամեթոդական հիմք**» ենթագլխում ներկայացվում է կառուցվածքային ռեալիզմի՝ նույն ինքը նեոռեալիզմի հայեցակարգի ծագումը, զարգացումը, ներհայեցակարգային հիմնական բանավեճերն ու դրանց արդյուքնում առաջացած տեսական ճյուղավորումները: Ուրվագծվել են այն փոփոխականները, որոնք ըստ հայեցակարգի որոշիչ են պետությունների արտաքին ու դաշինքային քաղաքականության հիմնախնդիրների ուսումնասիրության պարագայում, առանձնացվել են արտաքին սպառնալիքի դեպքում պետության անվտանգային ռազմավարությունները՝ քննարկելով դրանց նպատակահարմարությունը, թերությունները ու առավելությունները փոքր պետությունների առանձնահատկությունների համատեքստում: Ենթագլխում հիմնավորվում է կառուցվածքային ռեալիզմի կիրառության անհրաժեշտությունը ՀՀ արտաքին սպառնալիքների, դաշինքային քաղաքականության ձևավորման ու դրա դինամիկայի վրա ազդող գործոնների ուսումնասիրության համար:

Երկրորդ՝ «**Կոնստրուկտիվիզմը որպես ՀՀ-ՌԴ դաշինքային հարաբերությունների ուսումնասիրման տեսամեթոդական հիմք**» ենթագլխում ներկա-

յացվել է կոնստրուկտիվիզմի հայեցակարգի առանցքային հիմնադրույթները, սոցիալական իրականության այն տարրերն ու գործընթացները, որոնք կարևորվում են դրա կողմից պետությունների արտաքին ու դաշինքային քաղաքականության ուսումնասիրության հարցում: Ենթազխում վեր է հանվում նորմերի դերը պետական դերակատարների վարքի ձևավորման և փոփոխության գործընթացներում, ինչպես նաև հենց նորմի վերափոխումները՝ դրանց կենսաշրջանի տեսանկյունից: Ենթազխում վեր է հանվում կոնստրուկտիվիզմի նպատակահարմարությունը ՀՀ արտաքին ու դաշինքային քաղաքականության վրա ազդող միջսուբյեկտայնացված նորմերի, ինքնության, ընկալումների հետազոտման հարցում:

Երրորդ՝ **«Կառուցվածքային ռեալիզմի և կոնստրուկտիվիզմի համատեղելիությունն ու կիրառելիությունը ՀՀ-ՌԴ դաշինքային հարաբերությունների ուսումնասիրման տեսամեթոդական մոտեցման մեջ»** ենթազխում քննարկվում են նշված երկու հայեցակարգերի սինթեզի անհրաժեշտության գիտական հիմնավորումները, առանձին կիրառման դեպքում յուրաքանչյուրի բացերը, գիտական գրականության մեջ համատեղ կիրառման տեսական և կիրառական մշակումները: Ներկայացվում է հայեցակարգերի փոխլրացման միջոցով ՀՀ արտաքին քաղաքականության ուսումնասիրության նպատակահարմարությունը: Առաջարկվել է գերիշխանության ձգտող մեկից ավելի մեծ տերությունների համակարգում գործող փոքր պետության՝ արտաքին սպառնալիքը բալանսավորելու ռազմավարության սահմանում:

Երկրորդ՝ **«ՀՀ արտաքին քաղաքականության կառուցվածքային չափման էվոյուցիան (ՀՀ-ՌԴ հարաբերությունների օրինակով)»** գլխում կառուցվածքային ռեալիզմի պրիզմայով ներկայացվել են ՀՀ արտաքին ու դաշինքային քաղաքականության ձևավորման և էվոյուցիայի վրա ազդող գործոնները, որոնք ամբողջացվել են կառուցվածքային չափման մեջ: Գլխում հասցեագրվել են հետազոտական 2-րդ և 3-րդ խնդիրները:

Երկրորդ գլխի առաջին ենթազխում **«Կառուցվածքային չափման գործոնների կայացումն ու զարգացումը 2008 թ. ռուս-վրացական պատերազմի դրությամբ»** վերնագրով, առանձնացվել ու սահմանվել են ՀՀ արտաքին քաղաքականության ռուսական ուղղությունը պայմանավորող կառուցվածքային չափման գործոնների երեք մակարդակները՝ ներքին-կառուցվածքային, տարածաշրջանային-ենթահամակարգային, գլոբալ-համակարգային: Ըստ այդ բաժանման ներկայացվել են յուրաքանչյուր մակարդակում անկախությունից ի վեր ՀՀ արտաքին քաղաքականության ռուսական ուղղությանը վերաբերելի գործոնները և սահմանվել է դրանց խթանող կամ սահմանափակող ազդեցությունը, ինչպես նաև դրանց մշտադիտարկման միջոցով ցույց է տրվել չափման վերափոխումներն ու էվոյուցիան: Ներքին-կառուցվածքային մակարդակում կարևորվել և քննարկվել են պետության մոբիլիզացիոն կարողությունների տեսանկյունից առանցքային գործոններ: Տարածաշրջանային-

ենթահամակարգային մակարդակում ներկայացվել է ԽՍՀՄ փլուզմանը հաջորդած ժամանակաշրջանում ՀՀ անվտանգային միջավայրը, արտաքին սպառնալիքները և դրանց դիմակայելու կարողությունները: Այդ համատեքստում կիրառվել ու քննարկվել են կառուցվածքային ռեալիզմի կողմից առաջարկվող՝ արտաքին սպառնալիքին դիմակայելու հինգ ռազմավարությունների (ան)նպատակահարմարությունը ((1) ենթադաշնակցել սպառնացող պետությանը, 2) բալանսավորել մեծ տերության միջոցով՝ վերջիններիս հաշվին (free-riding), 3) բալանսավորել մեծ տերության միջոցով և կռվել, 4) դաշնակցել թույլ պետությունների հետ, 5) կռվել միայնակ (Labs, 1992, p. 392)) Հայաստանի պարագայում, և ցույց է տրվել ՀՀ դաշինքային քաղաքականության՝ ՌԴ-ին ենթադաշնակցման միջոցով արտաքին սպառնալիքների բալանսավորման քաղաքականության ձևավորման հիմնապատճառները: Բացի այդ ներկայացվել է ՀՀ-ի և արտաքին սպառնալիք հանդիսացող դերակատարների հարձակողական-պաշտպանողական կարողությունների հարաբերակցության դինամիկայի և աշխատակարարական մերձավորության գործոնների ազդեցությունը դաշինքային քաղաքականության համատեքստում: Գլոբալ-համակարգային մակարդակում առանձնացվել է ՌԴ-Արևմուտք հարաբերությունների հարացույցը՝ որպես ՀՀ արտաքին հավասարակշռված քաղաքականության հարցում որոշիչ հարթություն, ուրվագծվել է ԽՍՀՄ փլուզումից մինչև 2008 թ. ռուս-վրացական պատերազմը այդ հարաբերությունների ընդհանուր դինամիկան և դրանց ազդեցությունը Հայաստանի արտաքին քաղաքականության մանրունակության վրա:

Երկրորդ՝ «**Կառուցվածքային չափման գործոնների էվոլյուցիան 2008 թ. ռուս-վրացական պատերազմի արդյունքում**» ենթապլյուսում ներկայացվել են վերոնշյալ երեք մակարդակներում ուրվագծված գործոնների վերափոխման գործընթացները 2008 թ. ռուս-վրացական պատերազմի արդյունքում: Սահմանվել է դրանց խթանող կամ սահմանափակող ազդեցությունը ՀՀ արտաքին քաղաքականության ռուսական ուղղության վրա: Ներքին-կառուցվածքային մակարդակում ներկայացվել են պատերազմի արդյունքում Հայաստանի կրած տնտեսական վնասներն ու սահմանափակումները, առաջ եկած հաղորդակցային բնույթի մարտահրավերները, ինչպես նաև մոբիլիզացիոն ռեսուրսների փոփոխությունները: Տարածաշրջանային-ենթահամակարգային մակարդակում ցույց է տրվել պատերազմից հետո Հայաստանի՝ Ռուսաստանի և Վրաստանի հետ հարաբերություններում առկա հակասական շահերի ճգնաժամային կառավարման, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման, արցախյան համակարտության ռազմաքաղաքական հարցերի շուրջ տեղի ունեցող գործընթացների, արտաքին սպառնալիքների ու սեփական կարողությունների հարաբերակցության դինամիկան և դրանց ազդեցությունը Հայաստանի դաշինքային քաղաքականության վրա: Գլոբալ-համակարգային մակարդակում ներկայացվել են ռուս-վրացական պատերազմի արդյունքում ՌԴ-Արևմուտք հարաբերությունների վատթարացման, ապա նաև ՌԴ-ի և ԵՄ-ի շուրջ ձևավորվող

ինտեգրացիոն նախաձեռնությունների՝ գրոյական արդյունքով մրցակցության վերահաման հետևանքով ՀՀ արտաքին քաղաքականության համար առաջ եկած սահմանափակումները և ստեղծված փոխբացառող երկրնորանքները:

Երրորդ՝ «Կառուցվածքային չափման գործոնների էվոյուցիան 2016 թ. Ապրիլյան պատերազմից մինչև Արցախյան երկրորդ պատերազմ» ենթազվխում ներկայացվել են Ապրիլյան պատերազմի՝ որպես անվտանգային ցնցման արդյունքում տեղի ունեցած փոփոխությունները, որոնք գրանցվել են ՀՀ արտաքին քաղաքականության ռուսական ուղղության կառուցվածքային չափման մեջ: Ներքին-կառուցվածքային մակարդակում քննարկվել է պատերազմի արդյունքում նախաձեռնված մոբիլիզացիոն նոր ռազմավարության որդեգրումը, արնդրադարձ է կատարվել դրա արդյունավետությանը, քննարկվել են մշտադիտարկված սոցիալ-տնտեսական ցուցիչների վերափոխումներն ու դրանց ազդեցությունները ՀՀ դաշինքային քաղաքականության վրա: Տարածաշրջանային-ենթահամակարգային մակարդակում ներկայացվել են հարձակողական-պաշտպանողական կարողությունների մշտադիտարկման արդյունքները Ապրիլյան պատերազմից հետո և ի արձագանք դրա՝ դաշինքային հարաբերությունների միջոցով արտաքին սպառնալիքի բալանսավորման միտումները: Ցույց է տրվել Երևան-Մոսկվա-Բաքու հարաբերություններում Ռուսաստանի դերի էվոյուցիան և այդ եռանկյունիում Թուրքիայի միջամտող դերի, ինչպես նաև ՌԴ-ի հետ վերջինիս երկկողմ հարաբերությունների ազդեցությունը տարածաշրջանում ուժերի ու սպառնալիքների բալանսավորման վրա: Ներկայացվել են Հայաստանի արտաքին քաղաքականության ռուսական ուղղությունը պայմանավորող նորահայտ կամ վերափոխված գործոնները 2018 թ. Թավլյա հեղափոխության համատեքստում և ամփոփվել են առանձնացված գործոնների միտումները, որոնք պայմանավորել են 2020 թ. Արցախյան երկրորդ պատերազմի սանձազերծումը: Գլոբալ-համակարգային մակարդակում ցույց է տրվել, թե ինչպես է Մաքսային միության և Եվրասիական տնտեսական միության անդամակացությունը մեղմել Հայաստանի ինտեգրացիոն երկրնորանքը և հնարավորություն ստեղծել ԵՄ-ի հետ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կնքման համար՝ լինելով ԱՄՆ-ՌԴ, ԱՄՆ-Իրան լարվող հարաբերությունների սահմանափակող ազդեցության ներքո:

Ատենախոսության երրորդ գլուխը վերնագրված է «ՀՀ արտաքին քաղաքականության կոնստրուկտիվիստական չափման էվոյուցիան (ՀՀ-ՌԴ հարաբերությունների օրինակով)»: Խոսույթային վերլուծության մեթոդի կիրառմամբ ուսումնասիրելով ավելի քան 550 ելույթներ, հարցազրույցներ, ծրագրեր և հանրային խոսքի այլ միջոցներ՝ գլխում ներկայացվում են ՀՀ գործադիր ինստիտուտի արտաքին քաղաքականության պատասխանատու կառավարող էլիտաների ինքնությունները, ընկալումները, դավանած նորմերն ու պատկերացումները և դրանց դերակատարությունը նրանց վարած արտաքին քաղաքականության՝ մասնավորապես դրա ռուսական ուղղության վրա:

Այդպիսով փոխլրացվում է կառուցվածքային ռեալիզմի մոտեցումը, որտեղ կենտրոնական նշանակություն ունեն արտաքին սպառնալիքները, դրանք բալանսավորելու սեփական ու դաշինքային կարողությունները: Կոնստրուկտիվիզմի գործիքակազմի միջոցով այս գլխում ներկայացվում են վերջիններիս մասին կառավարող էլիտաների ընկալումները և դրանք ուղղորդող նորմերը, որոնք ընկած են էլիտաների արտաքին քաղաքական և անվտանգային հաշվարկներում: Երրորդ գլուխը հետևում է նախորդ գլխում որդեգրված փոլայնացման մեթոդին: Այն հասցեագրում է հետազոտական խնդիրներ 4-ը և 5-ը:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ վերնագրված **«Կոնստրուկտիվիստական չափման գործոնների կայացումն ու զարգացումը 2008 թ. ռուս-վրացական պատերազմի դրությամբ»**, ցույց է տրվում «Ղարաբաղ» շարժումից մինչ Ռոբերտ Քոչարյանի նախագահության ավարտը ընկած ժամանակաշրջանում կառավարող էլիտաների ընկալումները ադրբեջանաթուրքական սպառնալիքների, դրանց հակազդման կարողությունների և դաշինքային ակնկալիքների մասին: Որդեգրելով «երրորդ ուժի բացառման օրենքը» որպես արտաքին քաղաքական նորմ՝ «Ղարաբաղ» շարժման, ապա կառավարող էլիտայի անդամները միտված էին վերափոխելու այն նորմը, ըստ որի պահանջվում էր հակազդել թուրքական սպառնալիքը ռուսական օժանդակությամբ՝ այն համարելով անարդյունավետ Հայաստանի շահերի սպասարկման տեսանկյունից: Սակայն թե՛ արևմուտքից, թե՛ արևելքից ահազնացող արտաքին սպառնալիքների հետևանքով, ինչպես նաև Ռուսաստանի տարածաշրջանային կարևոր դերակատարության մասին ընկալման աճով պայմանավորված՝ վերոնշյալ օրենք-նորմը աստիճանաբար կորցնում է իր ազդեցությունը արտաքին քաղաքականության մշակման վրա: Սակայն դրա մեկ այլ հիմնադրույթ՝ անմիջական հարևանների հետ հարաբերությունների կարգավորման հրամայականը շարունակում է մնալ արտաքին քաղաքականությունը ուղղորդող կարևոր նորմ, թեև նույնպես չի հաջողվում իրականացնել թե՛ արտաքին, թե՛ ներքին քաղաքական պատճառներով: Ներքին պատճառներից գլխավորը, թերևս ներէլիտային, ապա հաջորդած կառավարող էլիտայի հետ ունեցած անհամաձայնությունն էր կապված արցախյան հակամարտության քաղաքական կարգավորման պատկերացումների հետ: Համոզված լինելով նրանում, որ առկա բանակցային տարբերակը գոյություն ունեցող պայմաններում և հեռանկարում լավագույնն էր, ինչպես նաև չունենալով առավել մեծ ակնկալիքներ այդ հարցում դաշնակցից՝ Լևոն Տեր-Պետրոսյանը հակված էր ընդունել հակամարտության կարգավորման բանակցվող տարբերակը: Ի հակադրություն նրա՝ այն էլիտան, որի մաս էր կազմում Ռոբերտ Քոչարյանը, ուներ ավելի լավատեսական պատկերացումներ ադրբեջանական սպառնալիքին հակազդելու Հայաստանի կարողությունների ու հնարավորությունների մասին: Ենթագլխում ներկայացվում են այդ վերաբերմունքի վերափոխումները և դրանց փոխկապակցվածությունը ադրբեջանական քաղաքականության կոշտացող դիրքորոշումներին զուգընթաց: Քննարկվում են ստատուս

քվյոյի պայմաններում Ռուսաստանի դաշնակցային դերի մասին ընկալման խորացումը և այդ համատեքստում կոմպլեմենտարիզմի քաղաքականության որդեգրման պատճառները, ինչպես նաև ՌԴ-Արևմուտք աճող մրցակցության հնարավոր ռիսկերի մասին էլիտայի պատկերացումները:

